Արձանագրություն N 2

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտայի 47, 51 շենքերի և Բագրատունյաց պողոտայի 14, 15, և 37, 47 շենքերի գեղավեստական լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-18/99 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

30.03.2018թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝	Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝	Ա. Կիրակոսյան /գնահատող/, Ե. Կարապետյան /գնահատող/ Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/99» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Տ. Իգիթյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2018 թվականի մարտի 30-ին, ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/99» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Տ. Իգիթյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն » ՓԲԸ
2	«Մառք» ՍՊԸ
3	«Սասունասար » ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Տ. Իգիթյան)

3.1 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտայի 47, 51 շենքերի և Բագրատունյաց պողոտայի 14, 15, և 37, 47 շենքերի գեղավեստական լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ				
Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը		
		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր

«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն » ՓԲԸ	136438	34000	6800	40800
«Մառք» ՍՊԸ		49000		49000
«Սասունասար » ՍՊԸ		66000	13200	79200

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Տ. Իգիթյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Սասունասար» ՍՊԸ-ի: Մասնակցի կողմից ներկայացված հայտում բացակայում է հրավերով պահանջվող լիցենզիայի «Էներգետիկ» ներդիրը: Անհրաժեշտ է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունը, հակառակ դեպքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակցի մասին

(Տ. Իգիթյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/99» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ «Մառք» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Տ. Իգիթյան)

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 03.04.2018թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

7. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 6-րդ կետում նշված հարցման ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:20-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ..... Տ. Իգիթյան

Անդամներ՝ ..... Ե. Կարապետյան

..... Ա. Կիրակոսյան

..... Կ. Հարությունյան

..... Ա. Հարությունյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան